

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԵԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020թ. հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար

- ❖ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժինը 2020թ. 1-ին կիսամյակի ընթացքում ապահովել է ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին և Գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունների օրինականությունը, ուսումնասիրվել է Մարզպետարանի կառուցվածքային սրորաբաժանումների և Մարզպետարանի ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների կողմից Մարզպետի և Գլխավոր քարտուղարի ընդունած իրավական ակտերի՝ որոշումների, կարգադրությունների և հրամանների նախագծերի ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխանությունը.
- ❖ Ուսումնասիրվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ Մարզպետի գրությամբ համապատասխան առաջարկություններ է ներկայացվել համայնքների ղեկավարներին.
- ❖ Հաշվետու ժամանակահատվածում մարզի ավագանիների կողմից ընդունվել է 386 որոշում, որոնք հիմնականում վերաբերվում են համայնքների բյուջեների ընդունմանը, դրանցում կատարված գումարային և հողվածային վերաբաշխումներին, համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի, դրույքաչափերի հաստատմանը, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օգտարմանը համաձայնություն տալուն և ներհամայնքային այլ խնդիրների:
Համայնքների ղեկավարների կողմից ընդունվել է 905 որոշում, որոնք վերաբերվում են շենքեր, շինություններ հասցեավորելուն, շինարարության թույլտվություններ տալուն, հողամասերը որպես առանձին միավոր գրանցելուն և նման այլ խնդիրների:
Անհամապատասխանությունների և թերությունների հայտնաբերման դեպքում որոշումները վերադարձվել են համայնք՝ համապատասխան ուղղումների, որոնք սահմանված կարգով ուղղվել և վերադարձվել են մարզպետարան:
- ❖ Ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները, ձեռնարկվել համապատասխան միջոցառումներ և առաջարկություններ են ներկայացվել Մարզպետին: Հաշվետու ժամանակահատվածում սրացել ենք երեսույթ քաղաքացու դիմում, ինչպես թղթային փարբերակով, այնպես էլ առցանց և ՀՀ վարչապետի աշխատակազմից կամ ՀՀ ՏԿ և ենթակառուցվածքների նախարարությունից վերամակագրված: Դիմումներում բարձրացված հարցերը վերաբերվում էին անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հետ կապված, աշխատանքային իրավունքների իրացման և բնակարանի վթարայնության հետ կապված, հողային (հարևանային իրավունքի) հարաբերությունների հետ կապված խնդիրների, գույքին պարձառոված վնասի փոխհատուցմանը, բնակավայրը էլ. էներգիայի, բնական գազի և ռոտզման ջրի մասնակի փոխհատուցում սրացող բնակավայրերի ցանկում